ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԿԳՄՍՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ նախաձեռնության ունակության զարգացումը դերային խաղի միջոցով

Անցկացման վայրը՝ Մարտունի

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Ժաննա Բադոյան

Դպրոց՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր

Մարտունի 2022

Բովանդակություն

1.Ներածություն 3

2. Գրական ակնարկ 3

3. Փորձարարական հետազոտություն 9

3.1. Խմբի նկարագիրը 9

3.2. Փորձարարական դասեր 9

3.2.1. Փորձարարական դաս - 1 9

3.2.2. Փորձարարական դաս - 2 10

4. Եզրակացություն 122

5. Օգտագործած գրականության ցանկ 133

6. Հավելված 144

Դասապլան - 1 144

Դասապլան - 2 178

1.Ներածություն

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է, որի ընթացքում երեխաներն առաջին անգամ շփվում են իրենց հասակակիցների հետ: Նրանց միացնում են ընդհանուր նպատակը, դրան հասնելու միասնական ջանքերը, ընդհանուր հետաքրքրություններն ու ապրումները: Այդ պատճառով էլ խաղը երեխաներին սովորեցնում է իրենց գործողություններն ու մտքերը ծառայեցնել որոշակի նպատակի, օգնում դաստիարակելու նպատակասլացություն: Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողություններն ու արարքները: Դա նշանակում է, որ միջավայրը թուլացնում է երեխայի զգացմունքային լարվածությունը և տրամադրում խաղին: Երեխան դառնում է նախաձեռնող և սոցիալապես ակտիվ: Անգամ ամենապասիվ աշակերտները մտնում են խաղի մեջ մեծ ցանկությամբ՝ օգտագործելով բոլոր ուժերը, որպեսզի խաղի ժամանակ ընկերներից հետ չմնան: Խաղի ընթացքում հետևելով երեխայի վարքին՝ կարելի է դատել ընտանիքում մեծահասակների հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին: Միաժամանակ երեխան փորձում է կատարել մեծի դեր՝ հասկանալով հանդերձ, որ ինքը դեռ մեծ չէ: Նմանակելով մեծահասակների տնային գործերը՝ երեխաները յուրացնում են կենցաղային աշխատանքի որոշ հմտություններ: Խաղերի ճնշող մեծամասնությունն արտացոլում է նաև տարբեր մասնագիտության մարդկանց աշխատանքը: Այսպիսով՝ այստեղից գալիս ենք այն եզրահանգման, որ խաղի միջոցով ընդլայնվում և խորանում են երեխաների հետաքրքրությունները տարբեր մասնագիտությունների նկատմամբ, և ձևավորվում է հարգանք աշխատանքի հանդեպ: Եվ արդյունքում երեխայի մեջ ձևավորվում է մեծի, հասարակայնորեն արժեքավոր դեր կատարելու դրդապատճառը:

Սակայն խաղային գործունեություն իրականացնելուց առաջ պիտի որոշել խաղի կանոնները: Դրանք բխում են գործունեության բնույթից, «թեմայից» և այլն: Երեխաներն ընդունում են այդ կանոնները, ենթարկվում դրանց սահմանած պայմաններին, անհրաժեշտության դեպքում՝ փոխում: Այս կերպ վարժվում են հասարակական կյանքի ապրելակերպին՝ իրականացնելով ինքնուրույն ու ստեղծագործական գործունեություն: Դերային խաղերի համար կարևոր են նաև մասնակիցների կարողություններն ու հմտությունները, որոնց նրանք տիրապետում են: Դրանք ընդհանուր ունակություններ են, որոնք պահանջվում են ցանկացած խաղում՝ հաղորդակցման ունակություն, խմբում աշխատելու կարողություն,

ղեկավար որակներ, դիրքորոշումը պաշտպանելու ունակություն, անընդհատ փոփոխվող պայմաններում գործելու ունակություն և այլն: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խաղային գործունեության միջոցով երեխան պիտի իր մեջ ավելացնի դրական ու
նվազեցնի բացասական որակները:

Այսպիսով, ինքնակազմակերպվող գործունեության ժամանակ երեխան.

- բավարարում է իր բնական հակումները,
- բացահայտում է իր առանձնահատկությունները,
- ինքնադրսևորվում է,
- սոցիալական հարաբերությունների մեջ է մտնում ընկերների հետ և ինքնուրույն
- կարգավորում այդ հարաբերությունները,
- փորձում է ինքնուրույն հաղթահարել իր առջև դրված խոչընդոտները:

Խաղի օգտագործումը որպես դասընթացի հիմնական տեսակ թույլ է տալիս լուծել հարցերի մի ամբողջ շարք:

Կարող է հարց առաջանալ. արդյո՞ք որևէ խաղ օգտակար կլինի զարգացման համար: Պատասխանը կլինի միանշանակ: Այո, յուրաքանչյուր խաղ ունի որոշակի առավելություններ երեխայի զարգացման համար: Այս գործունեության շնորհիվ նա անընդհատ փնտրում է խնդիրների լուծման նոր տարբերակներ և գործնականում կիրառում ավելի վաղ սովորածը:

- Համախմբում է արդեն սովորած նյութը.
- Զարգացնում է նոր հմտություններ,
- Զարգացնում է ճանաչողական ունակությունները,
- Թույլ է տալիս երեխային նմանակել իրավիճակները և լուծել խնդիրները,
- Սովորեցնում է կենտրոնանալ,
- Զարգացնում է երևակայությունն ու մտածողությունը,
- Թույլ է տալիս գտնել նոր գիտելիքների և հմտությունների անհրաժեշտությունը,
- Խաղի հստակ կանոնների և սահմանափակումների շնորհիվ այն զարգացնում է համառություն և նվիրվածություն,
- Նպաստում է սովորողների նախաձեռնության ունակության զարգացմանը:

Ուսուցչի պարտականությունն է՝ սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ: Այդ ունակությունների զարգացման լավագույն միջոցը՝ հատկապես ռուսաց լեզվի

դասավանդման շրջանակներում՝ դերային խաղն է:

2. Գրական ակնարկ

Դերային խաղը հիմնված է միջանձնային հարաբերությունների վրա, որոնք իրականացվում են հաղորդակցության գործընթացում: Որպես միջանձնային հաղորդակցության մոդել՝ դերախաղը առաջացնում է հաղորդակցության անհրաժեշտություն, խթանում է ռուսաց լեզվով հաղորդակցությանը մասնակցելու հետաքրքրությունը և այս առումով կատարում է մոտիվացիոն և խրախուսական գործառույթ:

Դերային խաղը կարող է վերագրվել կրթական խաղերին, քանի որ այն մեծապես որոշում է լեզվական գործիքների ընտրությունը, նպաստում է խոսքի հմտությունների և կարողությունների զարգացմանը և թույլ է տալիս մոդելավորել աշակերտների հաղորդակցությունը տարբեր խոսքային իրավիճակներում: Դերային խաղերը՝ ռուսաց լեզվի ուսուցման ընթացքում՝ դաստիարակում են գիտակցված կարգապահություն, աշխատասիրություն, փոխօգնություն, դեռահասի ակտիվություն, տարբեր գործունեությամբ զբաղվելու պատրաստակամություն, անկախություն, սեփական տեսակետը պաշտպանելու կարողություն, նախաձեռնություն ցուցաբերելու, որոշակի պայմաններում լավագույն լուծումը գտնելու կարողություն, այսինքն. կարելի է խոսել դերային խաղի դաստիարակչական ֆունկցիայի մասին: Դերախաղը ձևավորում է դպրոցականների կարողությունը՝ խաղալու այլ անձի դերը, իրենց տեսնելու հաղորդակցման գործընկերոջ դիրքից: Այն կենտրոնացնում է սովորողներին սեփական խոսքի վարքագծի և զրուցակցի վարքագծի պլանավորման վրա, զարգացնում է իրենց գործողությունները վերահսկելու, ուրիշների գործողությունների օբյեկտիվ գնահատական տալու ունակությունը: Հետևաբար, դերային խաղը նախաձեռնության զարգացման համար և ռուսաց լեզվի ուսուցման գործընթացում կատարում է կողմնորոշիչ գործառույթ: Դեռահասները ձգտում են հաղորդակցության, հասուն տարիքի, իսկ դերախաղը նրանց հնարավորություն է տալիս դուրս գալ իրենց գործունեության համատեքստից և ընդլայնել այն: Ապահովելով դեռահասների ցանկությունների կատարումը՝ դերախաղը դրանով իսկ իրականացնում է փոխհատուցման գործառույթ: Դերային խաղը կարող է վերագրվել կրթական խաղերին, քանի որ այն մեծապես որոշում է

լեզվական գործիքների ընտրությունը, նպաստում է խոսքի հմտությունների և կարողությունների զարգացմանը և թույլ է տալիս մոդելավորել ուսանողների հաղորդակցությունը տարբեր խոսքային իրավիճակներում: Այլ կերպ ասած, դերային խաղը նախաձեռնության ունակության զարգացման լավագույն միջոցն է: Այս առումով դերախաղն ապահովում է դաստիարակչական գործառույթ: Դերային խաղերում՝ գիտակցված կարգապահություն, աշխատասիրություն, փոխօգնություն, դեռահասի ակտիվություն, տարբեր գործունեությամբ զբաղվելու պատրաստակամություն, անկախություն, սեփական տեսակետը պաշտպանելու կարողություն, նախաձեռնություն ցուցաբերելու և որոշակի պայմաններում լավագույն լուծումը գտնելու կարողություն: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռք բերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը:

Կարևորելով դասավանդման գործընթացում ուսուցչի մասնագիտական կարողությունները, միաժամանակ սովորելու և սովորեցնելու հմտությունների և Հաճախակի կազմակերպվող լեզվական տարաբնույթ ու հետաքրքրաշարժ միջոցառումները օգնում են սովորողների նախաձեռնության ունակության զարգացմանն ու ամրապնդմանը, միմյանց աջակցելու պատրաստակամության ձևավորմանը:Այս տեսանկյունից նախաձեռնության ունակության ձևավորման և զարգացման գործում կարևոր ենք համարում դասավանդման «Դերային խաղ» մեթոդի կիրառումը:

Դրական կողմերը.

Դերային խաղն ունի շատ առավելություններ: Երբ սովորողը ներկայացնում է մի որևէ կերպար, ձերբազատվում է իրեն կաշկանդող մի շարք բարդույթներից և ազատ ինքնադրսևորվում՝ խաղալով տվյալ կերպարը:

Դերային խաղը նպաստում է սովորողի՝ տարբեր իրավիճակներում ճիշտ նախաձեռնության ունակության զարգացմանը: Կան բազմաթիվ իրավիճակներ, որոնցում սովորողը պատանի տարիքում, հնարավոր է, դեռ չի հայտնվել, բայց հեքիաթի կերպարի միջոցով իրեն երևակայում է այդ իրավիճակում և փորձում լուծումներ և ելքեր առաջարկել:

Դերային խաղի մեթոդը շատ նպատակահարմար է իրականացնել՝ հիմք ընդունելով մի որևէ հեքիաթ կամ հեքիաթներ: Աշխատանքի սկզբում հեքիաթները ուղարկում ենք սովորողների էլեկտրոնային հասցեներին, որպեսզի մեկ անգամ ևս

ընթերցեն: Հաջորդ օրը դասարանում առաջարկում եմ անսապասելի իրավիճակներ, օրինակ՝ սովորողներին առաջարկում եմ՝ պատկերացնեն, թե հայտնվել են անազատության մեջ և պետք է ելքեր փնտրեն, որպեսզի ազատվեն այդ վիճակից: Սովորողներին դրդում եմ, ելնելով իրենց կերպարի առանձնահատկություններից, բնավորությունից, նախաձեռնել, թե տվյալ կերպարը համապատասխան իրավիճակում ինչպես
կդրսևորի իրեն:

Այս դեպքում շատ կիրառելի են ռոդարիական հնարները, որոնք թույլ են տալիս չսահմանափակել միտքը և կիրառել թե՞ սովորական, թե՞ անսովոր բոլոր գաղափարները նպատակին հասնելու համար: Հերթով լսելով սովորողներին և նրանց առաջարկած լուծումները, թե իրենց հերոսն ինչպես իրեն կպահի այս կամ այն իրավիճակում,մուտքագրում եմ նրանց մտքերը և համատեղ ուժերով ստեղծված նոր հեքիաթն ըստ դերերի բաժանում սովորողներին: Դերաբաշխումը կատարում ենք տարբեր ձևերով.

- պատահական բաշխում
- սկզբում բաժանում ենք գլխավոր դերերը, մնացածը՝ ըստ ցանկության
- դերերը տալիս ենք ըստ մասնակիցների՝ այդ դերերի համապատասխանությամբ
- ընտրում ենք այնպիսի մասնակիցների, որոնք ունեն առաջարկվող դերի հակառակ որակները
- ընտրությունը թողնում եմ մասնակիցներին:

Այս մեթոդով սովորողները ձեռք են բերում ինքնուրույնություն, սովորում են աշխատել թիմերով՝ մեկը մյուսին օգնելով, ազատվում են տարբեր տեսակների բարդույթներից, վախերից, սովորում են լսել միմյանց, զարգանում են նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները: Դերային խաղի միջոցով սովորողը ձեռք է բերում մի շարք հմտություններ.

- խոսքի և արտահայտչականության զարգացում
- ընթերցանության հմտությունների զարգացում
- աշխատանք խմբերով
- մեդիահմտությունների զարգացում
- հետազոտելու /համացանցումորոնելու հմտություններ/
- թվային միջոցները գործածելու հմտություններ
- տեխնոլոգիական հմտությունների զարգացում
- երաժշտության, պատկերի, գույների զգացողության, ճաշակի զարգացում

- անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում:

Համատեղ ստեղծված աշխատանքի հաջող լինելու դեպքում այն կարող է վերածվել
թատերական ներկայացման:

Դերախաղերը արտացոլում են երեխաների պատկերացումները շրջակա աշխարհի, մարդկանց հարաբերությունների և մասնագիտական պարտականությունների մասին:

Բացասական կողմերը.

- Սովորողները խաղի մեջ որևէ այլ նպատակ չեն դնում, քան խաղալը:
- Երբեմն խաղի ավարտից հետո մասնակիցները կարող են շարունակել ինչ-որ բան պարզաբանել, վիճել, խռովել իրարից, ավելին թշնամանալ, նշանակում է խաղի ընթացքում ինչ-որ բան այնպես չի եղել, և խաղը չի ծառայել իր նպատակին:

3. Փորձարարական հետազոտություն

3.1. Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքն անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիրի 11-րդ դասարանում:

Փորձարարական հետազոտության համար, ես որոշեցի կիրառել «Դերային խաղ» մեթոդը, որպեսզի մեծանա աշակերտների հետաքրքրությունն ու մոտիվացիան դասապրոցեսներին մասնակցելու՝ այսինքն կարծիքներ հայտնելու, համեմատելու, վերլուծելու, իրենց մտքերն ազատ ու հստակ արտահայտելու, ինքնուրույնություն ձեռք բերելու, նախաձեռնության ունակությունները դրսևորելու համար:

Այս դասարանում սովորում են 17 աշակերտ՝ 11 աղջիկ և 6 տղա, որոնք ունեն տարբեր ընդունակություններ:

Ռուսաց լեզու առարկան անցնում են շաբաթական 2 ժամ, այն դասացուցակում տեղադրված է 2-րդ կամ 3-րդ ժամերին:

Այս դասարանի հիմնական խնդիրները.

- Կատարել իրեն տրված դերը
- Ազատ և անկաշկանդ արտահայտել սովորածը
- Դրսևորել նախաձեռնության ունակություն

3.2. Փորձարարական դասեր

3.2.1. Փորձարարական դաս - 1

Այսօրվա դասը՝ «Императрица Екатерина II» (տե՛ս դասապլան 1, էջ՝ 14):

Դասը սկսվեց հարցադրումներով, մեծ և բուռն քննարկում տեղի ունեցավ աշակերտների և ուսուցչի միջև:

Քանի որ ընտրված է «Դերային խաղ» մեթոդը, աշակերտներին հանձնարարված էր տանը մի քանի անգամ լավ ուսումնասիրել դասը, հետո յուրքանչյուր աշակերտ իր ցանկությամբ ընտրեց իր դերը: Այնուհետև երեխաները սկսեցին դերային խաղի միջոցով ներկայացնել դասի թեման: Այն աշակերտները, որոնք նախկինում պասիվ

դիրքորոշում ունեին դասի նկատմամբ, նրանք ևս բավականին աշխույժ սկսեցին մասնակցել դասապրոցեսին իրենց ընտրած հերոսին դերային խաղի միջոցով ներկայացնելով: Նկատեցի, որ դերային խաղն օգնել է պասսիվ և ամաչկոտ երեխաներին լինել ավելի ակտիվ և ավելի համարձակ արտահայտել մտքերը, որովհետև երեխաներին հանձնարարել էի իրենց ընտրած կերպարին ներկայացնել իրենց նախաձեռնության ունակությամբ, թե ինչպիսի՞ն են իրենք պատկերացնում օրինակ Եկատերինա կայսրուհուն, Սուվորովին, Պետրոս III-ին մյուս կերպարներին կատարել դերայն խաղը իրենց բառապաշարով և նախաձեռնություն հանդես բերել կերպարների ստեղծման ընթացքում:

Խաղի ավարտից հետո,սովորողները բանավոր կերպով պատասխանեցին դասի վերջում տրված հարցերին, քանի որ ընտրված երեխաներին հանձնարարել էի դասը ներկայացնել իրենց բառապաշարով և պատկերացումներով երեխաները ավելի ազատ ու անկաշկանդ էին արտահայտվում, իրենց մարմնավորած կերպարը իրենց կարծիքով ավելի հետաքրիր դարձնեու նախաձեռնությունը ցուցաբերում, ուստի ես նրանց չկաշկանդեցի գրքային բառապաշարով, ուղղակի անհրաժեշտության դեպքում պարզաբանող և ուղորդող հարցեր տվեցի:

Արդյունավետ քննարկման, խմբերի ներկայացրած ճիշտ տեսակետների և ընտրված հաջող մեթոդի շնորհիվ աշակերտների ակտիվությունը բարձրանում էր դասին մասնակցելու, քննարկելու, պատկերացումները արտահայտելու առումով: Ամբողջ դասարանը ներգրավված էր դասապրոցեսին:

Վերը նշվածից հետո հարցադրումի միջոցով անցան նոր դասի «Оазис тишины», թեմայi հաղորդմանը, ծանոթացրեցի նոր դասին, պատմեցի և նորից հանձնարարեց, որ յուրքանչյուր խումբ «Դերային խաղ» մեթոդով տանը պատրաստի իր թեման:

3.2.2. Փորձարարական դաս - 2

Դասը սկսեցի հարց ու պատասխանով՝ անցած թեմայի վերհիշմամբ: Աշակերտները բավականին ակտիվ մասնակցեցին և պատասխանեցին անցած նյութը, որը ինչպես պարզվեց շատ լավ էին յուրացրել:

«Հարց ու պատասխանի» մեթոդով ստուգվեց նրանց գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Այնուհետև օգտագործելով «Դերային խաղ» մեթոդը, խմբերից յուրաքանչյուրը սկսեց ակտիվ ներկայացնել իրեն տրված թեման: Աշակերտներից յուրաքանչյուրը ակտիվորեն ներկայացրեց իրեն հանձնարարված հատվածը:

Դերային խաղի ավարտից հետո, աշակերտները սկսեցին ակտիվորեն քննարկել

դասը:

Սովորողները իրենց պատկերացումների շրջանակներում համեմատականներ անցկացրեցին ներկա և նախորդ դասերի միջև: Խոսեցին դրանց հերոսների մասին, իրենց պատկերացումների շրջանակներում ներկայացրեցին հերոսների դրական և բացասական հատկանիշները:Յուրքանչյուր սովորող դասագրքից կարդաց իր խմբին հանձնարարված՝ իր նախընտրելի հատվածը և աշակերտներից յուրքանչյուրը, վերլուծեց իր ունակությունների շրջանակներում:Հաջորդիվ բանավոր կրկնության մեթոդով ուսուցանվեց նոր դասը:

Վերջում հանձնարարեցի նոր թեմա՝ «Личность и общество»:

4.Եզրակացություն

Աշակերտների ակտիվությունը բարձրացնելու, սովորողներին ինքնա-արտահայտվելու հնարավորություն տալու, նախաձեռնության ունակությունը զարգացնելու համար անցկացրեցի 2 փորձարարական հետազոտական դասեր՝ «Դերային խաղ» մեթոդով, որտեղ համեմատաբար պասսիվ աշակերտներն իրենց դրսևորեցին բավականին ակտիվ, ամբողջ դասարանը ներգրավվեց դասապրոցեսների լիարժեք կայացմանը, հաղորդվեցին գիտելիքներ, կարծիքներ: Աշակերտները խոստովանեցին, որ իրենց շատ դուր եկավ այս մեթոդը: Նրանք մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցին տրված թեման, դիտարկեցին կապը, պատմություն առարկայի հետ: Այսպիսով, ես եկա այն եզրակացության, որ «Դերային խաղ» մեթոդն օգնեց աշակերտներին ինքնադրսևորվելու, ինքնարտահայտվելու, անկաշկանդ իրենց նախաձեռնության ունակությունները արտահայտելու գործում, և նպաստեց պասսիվ աշակերտների դասապրոցեսում ներգրավածությանն ու ակտիվացմանը,նրանց հետաքրքրությունների աճին ու գիտելիքների ավելացմանը, նախաձեռնության ունակությունների դրսևորմանն ու զարգացմանը:

5. Օգտագործած գրականության ցանկ

1. Ձեռնարկ ուսուցիչների պատրաստման համար, գործիմաց մոտեցում, Տեսություն և պրակտիկա, ԱՅՈԵՔՍ, Եր., 2004:
2. Սարուխանյան Ս., Դիշաջաղայան Ն. և ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008:
3. Գիտական հոդվածներ, մանկավարժություն և մեթոդիկա, Վանաձորի մանկ. ինստ., Վանաձոր, ՍԻՄ տպագրատուն, 2010, 389:
4. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,,Մանկավարժություն,, Մանկավարժ 2005
5. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ «Ռուսաց լեզու» 2007
6. Հովհաննիսյան Հ. և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004թ
7. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ձոն, 2011, 160
8. Ղարիբջանյան Օ. Բ., Ժողովրդական ավանդույթները՝ դպրոցականների բարոյական դաստիարակության գործոն, Եր., «Լույս », 1978

6. Հավելված

Դասապլան - 1

Առարկա	Ռուսաց լեզու	Ամսաթիվ	13.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	XI
Թեմա	«Императрица Екатерина II» Ուսուցանել «Оазис тишины»						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ,համակարգիչ						
Դասի նպատակը	Ծանոթացնել դասի պատմական կերպարների հետ Կարևորել երեխաների նախաձեռնության ունակության ձևավորումն ու զարգացումը Ձևավորել հմտություններ դասից հատվածներ կարդալու, մեկնաբանելու, վերլուծելու						
Վերջնարդյունքները	Կարողանա ճիշտ արտահայտել մտքերը Մտապահի և յուրովի մեկնաբանի կարդացածը Դրսևորվի հետաքրքրություն ռուսաց լեզվի նկատմամբ						

Գործողություններ ժամ/տևո-ղություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով, աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել Հարցադրումներ	Ո՞րն էր նախորդ դասի թեման	
10ր	Աշակերտները «Դերային խաղ» մեթոդով սկսեցին ներկայացնել տրված դասը Եկատերինա II-ի և դասի մյուս պատմական կերպարները վերլուծեցին, բնութա-գրեցին,համեմատե-ցին, կարծիքներ հայտնեցին: Ծանոթացան նոր կերպարների հետ	Հարցադրումներով պասիվ աշակերտներին ևս ներգրավվել ընդգրկել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր	Էրмитаж Ի՞նչ է էրմիտաժը Որտե՞ղ է գտնվում էրմիտաժը	Հարցադրու-մների մեթոդ
5ր	Սովորեցին նոր թեման,	Կատարել ճշտումներ և շտկումներ Ուղղորդել	Ի՞նչ արժեքավոր հավաքածուներ կան էրմիտաժում Քանի՞ սրահ ունի էրմիտաժը	

10ր	Ներկայացրեցին թեմայի վերաբերյալ իրենց կարծիքները	Հետևել աշակերտներին	Ե՞րբ է հիմնադրվել էրմիտաժը	«Դերային խաղ» մեթոդ
15ր	Համեմատեցին նախկինում անցած դասերի հետ		Հետադարձ կապ Ի՞նչ գիտես էրմիտաժի մասին	
10ր	Ընթերցեցին նոր դասի տեքստը	Նոր թեմայի հաղորդում Հանձարարություններ տալ Պատասխանել աշակերտների հարցերին	Քեզ դուր եկա՞վ արդյոք «Դերային խաղ» մեթոդը	

Դասապլան - 2

Առարկա	Ռուսաց լեզու	Ամսաթիվ	17.05.2022	Կիսամյակ	II	Դասարան	XI
Թեմա	«Оазис тишины» «Личность и общество»						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, գրատախտակ, համակարգիչ						
Դասի նպատակը	Դերային խաղի միջոցով, երեխաների մեջ նախաձեռնության ունակություն Արժևորել ռուս գրականությունն ու պատմությունը Համեմատել հերոսների կերպարները						
Վերջնարդյունքները	Տարբերի և ցույց տա հերոսների կերպարների տարբերություններն ու ընդհանրությունները Հերոսների միջոցով հաղորդակցվի ռուսաց լեզվին ու պատմությանը Կատարի ինքնուրույն և ճիշտ եզրահանգումներ ու վերլուծություններ						

Գործողություններ /ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող Մեթոդներ
5ր	Դասը սկսվեց հարց ու պատասխանով Աշակերտները վերհիշեցին նախորդ դասի թեման	Ողջունել դասարանին Հարցադրումներ	Ո՞րն էր անցած դասի թեման Императрица Екатерина II	Հարցադրումների մեթոդ
10ր	Օգտագործելով «Դերային խաղ» մեթոդը աշակերտներն սկսեցին ակտիվ քննարկել, վերլուծել նախապես տանը դիտված և ունկդրած նյութերից Համեմատականներ անցկանցնել անցածի և նորի միջև, բնութագրեցին կերպարները , կարծիքներ հայտնեցին	Խրախուսել և գովեստի խոսքերով բարձրացնել աշակերտների մոտիվացիան, հետաքրքրու-թյունն ու շահագրգռվածությունը Աշակերտներին ներգրավվել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցեր	Ո՞վ էր Եկատերինա II-ը, ի՞նչ գիտես նրա մասին Ո՞ր կերպարը քեզ դուր եկավ	Մտագրոհ

	Ծանոթացան ժամանակի հայտնի պատմական կերպարների հետ Նկատեցին որոշ նմանություններ և տարբերություններ մյուս թեմաների հետ			
10ր	Միջառարկայական կապ ստեղծվեց պատմություն առարկայի հետ Բացեցին գրքեր կարդացին նոր նյութի համապա-տասխան տեքստը Նոր ուսուցանվող դասը սովորեցին «Դերային խաղ» մեթոդով	Հետևել դասին Հետևել աշակերտներին Կատարել ճշտումներ և շտկումներ	Կցանկանայի՞ր նմանվել բժիշկ Այբոլիտին Ինչպե՞ս ես գնահատում Սուվորվի և Եմելյան Պուգաչովի կերպարները	Բանավոր կրկնության մեթոդ

10ր	Պատասխանեցին գրքում գրված հարցերին(հարցեր և առաջադրանքներ բաժնից) Վերջում ամփոփեցին ընդհանուր, գլխավոր թեման	Կատարել ճշտումներ և շտկումներ Հարցադրումներ	Քեզ դուր եկա՞վ թեման Սիրու՞մ ես ռուսաց լեզուն	«Դերային խաղ»